«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝	էպոսի դերը հայրենասիրության եւ ազգային արժեհամակարգի ձեւավորման գործում
Առարկան՝	Հայոց լեզու եւ գրականություն
Հետազոտող ուսուցիչ՝	Պողոսյան Նազանի
Ուսումնական հաստատություն՝	ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղի Ա. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց

Երեւան 2023

Թեմա՝ էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Թեմայի հարց՝ Ի՞նչ ազդեցություն ունի «Սասնա ծռեր» էպոսի ուսումնասիրությունը դեռահասների մոտ հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԷՊՈՍԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 5
ԷՊՈՍԻ ԿԱՆԱՅՔ..... 8
ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՁԳՏՈՒՄԸ 10
«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ՎԻՊԵՐԳՈՒՄ ԱՐԾԱՐԾՎԱԾ ՈԳԻՆ 13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....15
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ..... 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային էպոսը նկարագրում է տվյալ ազգի կամ էթնոսի ծագումը, զարգացումը և պատմությունը: Այն նաև օգնում է փոխանցել ազգի ինքնորոշման կամ ինքնաճանաչման դրվագները և բազմաթիվ ազգային խորհրդանիշների առաջացման պատմությունը:

Հայկական մշակույթում «Սասնա ծռեր» ազգային էպոսն առանձնահատուկ տեղ է գրավում: Այն ծնունդ է առել Հայկական լեռնաշխարհի ամենագողտրիկ անկյուններից մեկում՝ Սասունում: Սասունը պատմական Մեծ Հայքի Աղձնիք նահանգի տասներորդ գավառն է, որը տարածվում է Հայկական Տավրոս լեռների վրա:

Բոլոր ազգային էպոսներն իրենց առջև դնում են պետականության խնդիրը, և եթե այն չունի պետականության խնդիր, ապա այն էպոս համարվել չի կարող: Հայկական ազգային էպոսում պետության և պետականության խորհրդանիշը համարվում է բերդը: Բերդի և հզոր պարիսպների կառուցումով էլ հենց էպոսի առաջին գլխավոր հերոսները՝ Սանասարն ու Բաղդասարը սկիզբ են դնում Սասնա տոհմին և Սասնա տանը:

«Սասնա ծռեր»-ը որպես էպոս իր 4 ճյուղերով հանդերձ, ստեղծվել ու զարգացել է հնագույն շրջանից և իր վերջնական և ավարտուն տեսքը ստացել 8-րդ դարում: էպոսը համահավաք տարբերակով կոչվում է «Սասնա ծռեր»: «Ծուռ» բառն այս պարագայում ունի իմաստային մի քանի նշանակություններ՝ դիվահար, խենթավուն, խելահեղ քաջ և այլն: «Սասնա ծռեր» էպոսը կառուցվածքային առումով կազմված է վիպական չորս մասերից կամ ճյուղերից, որոնցից յուրաքանչյուրը կոչվել է տվյալ ճյուղի գլխավոր հերոսի անունով՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Միհր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Միհր»: Հերոսների այս չորս սերունդը միմյանց հետ կապված են ազգակցական կապերով: «Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հերոսական անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած առասպելական դյուցազունների սխրանքներով և հայ ժողովրդի՝ իր ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ մղած դարավոր պայքարով: էպոսի ստեղծման հստակ թվականը մեզ հայտնի չէ, քանի որ վերջինս գալիս է ժամանակի խորքից և ունի պատմական խոր ակունքներ: էպոսի ասացողները էպոսը պատմել են հայկական տարբեր բարբառներով, մեծ մասամբ մոկաց, մշո, սասնա, ինչպես նաև արարատյան:

էպոսի պատումներից մեկը 1873 թվականին գրի է առել Գարեգին Սրվանձտյանցը՝ հրատարակելով *«Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ»* վերնագրով: 1889 թվականին էպոսի մի տարբերակ գրի է առել Մանուկ Աբեղյանը, իսկ արդեն 1939 թվականին Հովսեփ Օրբելին՝ էպոսագետների խմբի հետ մեկտեղ, ստեղծում է 60 պատումներից բաղկացած համահավաք բնագիր: Համահավաք բնագիրը թարգմանվել է ֆրանսերեն, չինարեն, անգլերեն (թարգմանիչ՝ Լևոն Զավեն Սյուրմելյան), հունարեն, ռուսերեն, գերմաներեն, վրացերեն, թուրքերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով: Սասնա ծռեր ամբողջական կամ մասնակի մշակել են նաև Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Սողոմոն Տարոնցին, Վիգեն Խեչումյանը, Հմայակ Սիրասը, Մկրտիչ Խերանյանը, Նաիրի Զարյանը և ուրիշներ: էպոսին բազմիցս անդրադարձել են կերպարվեստում (Հակոբ Կոջոյան, Երվանդ Քոչար, Միհր Աբեղյան, էդուարդ Իսաբեկյան, Արտաշես Հովսեփյան և ուրիշներ), երաժշտության մեջ (Գևորգ Բուդաղյանի «Խանդութ» երաժշտական կոմպոզիցիան՝ ըստ Ալեքսանդր Սպենդիարյանի երաժշտության, էդգար Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» բալետ-օպերան և այլն), կինոարվեստում («Սասնա ծռեր» ռեժիսոր՝ Արման Մանարյան, 2010 թվական, մուլտֆիլմ), թատրոնում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին սփյուռքահայերի հանգանականությամբ ստեղծվել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, իսկ Արցախյան պատերազմի տարիներին կազմավորվել են «Սասնա ծռեր» և «Սասունցի Դավիթ» կամավորական ջոկատները: Հայաստանի անկախ Հանրապետությունում էպոսի հերոսների անուններով կոչվել են տեղանուններ, ինչպես նաև «Սասունցի Դավիթ անունով մետրոպոլիտենի կայարան: Ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության կոնվենցիայի Միջկառավարական կոմիտեի 7-րդ նստաշրջանը 2012 թվականի դեկտեմբերի 5-ին «*Սասնա ծռեր կամ Սասունցի Դավիթ էպոսի կատարողական դրսևորումները»* հայտն ընդգրկեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

ԷՊՈՍԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Սասունցի Դավիթը» նվիրված է Սասնա դյուցազունների չորս սերնդի ծննդյան, կյանքի ու սխրանքների պատմությանը: Համապատասխանաբար էպոսը բաղկացած է չորս մասից, որոնք կոչվում են ճյուղ: Այս անվանումը, հավանաբար, կապված է տոհմաբանական ծառի պատկերացման հետ, որը խորհրդանշում է հայ դյուցազունների տոհմածառը:

Ակնհայտ է, որ մեր հիանալի ու հարուստ էպոսն՝ իր հնագույն շերտերով, ինքնության բաղադրիչ գաղափարների գանձարանով, կարող է դառնալ հասարակությանը միավորող, նրան ոգեշնչող գաղափարական առանցք, սակայն անհրաժեշտ է նախ և առաջ խորությամբ ճանաչել էպոսը, այնտեղ արծարծվող գաղափարներին չմոտենալ ընտրողաբար ու պատեհապաշտությամբ: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ոչ միայն էպոսի ռազմական ու հերոսական կողմին, այլ առաջին հերթին հոգևոր ու բարոյական ուղերձներին:

Չորս ճյուղերի հերոսների մեջ ընդհանուր շատ բան կա՝ մեծանում են ոչ թե օրով, այլ ժամով, հասակակիցների հետ ունեցած ընդհարումների ժամանակ հանդես են բերում իրենց արտասովոր ուժը, սխրանքներ են գործում, կռվում ու հաղթում են կամ վիշապներին ու հրեշներին, կամ դրսից եկած թշնամիների անհաշիվ հրոսակներին… Եվ սասունցիների չորս սերունդն էլ փոքր-ինչ ծուռ են, խենթավուն, մանկան նման անհասկացող: Դրա հետ մեկտեղ դյուցազուններից յուրաքանչյուրին իր դերն է նախատեսված, յուրաքանչյուրն իր խնդիրն ունի: Ճյուղից ճյուղ աճում է սյուժեի լարվածությունը: Դավթին նվիրված ճյուղը վերին, ամենաբարձր կետն է : Փոքր Միհրին նվիրված վերջին ճյուղը ավարտականն է, բայց շատ ավելի դա սպասում-ճյուղ է, հույս: Կհասնեն լավ ժամանակներ, Միհրը դուրս կգա զնդանից, և ծառի ճյուղերին բողբոջներ կբռնեն, շիվեր կերկարեն… «Եթե կյանքը թողնում է ծառի մի ճյուղը, ասված է «Չհանդոգյե-Ուպանիշադայում», այն չորանում է, եթե թողնում է երկրորդը՝ այն չորանում է, եթե թողնում է ամբողջ /ծառը/, ապա այն ամբողջությամբ է չորանում…

Հիրավի նա / էակը/, որից հեռացել է կյանքը, մեռնում է, բայց /ինքը/ կյանքը չի մեռնում: Եվ այդ նուրբ էությունը այն ամենի հիմքն է, ինչ գոյություն ունի»[1]:

Կյանքը երբեք չի հեռացել Սասնա դյուցազուններին կենսածառից: Ժողովուրդն ապրել է, և կյանքը չի մահացել:

«Սասունցի Դավթի» հազարամյակի առթիվ Ավետիք Իսահակյանը գրեց «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը.

I

Մեր հոյակապ հին վանքերի մութ խուցերում, մենության մեջ
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեջ,
Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն,
Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրա դժգույն-
Եղեռնները, նախճիրները հորդաների արյունարուշտ,
Փլուզումը հայրենիքի և ոսոխի սուրը անկուշտ:
Եվ ողբացին լալահառաչ դժխեմ բախտը Հայաստանի
Եվ հուսացին արդարության մի խուլ աստծու դատաստանի:

II

Մեր գեղջուկի պարզ խրճիթում, սուրբ օջախի շուրջը նստած՝
Գուսանները մեր խանդավառ, առջևները գինի և հաց,
Վիպերգեցին հաղթանակը դյուցազնների մեր մեծազոր
Եվ ծաղրեցին պարտությունը ոսոխների մեր բյուրավոր:
Եվ հյուսեցին պատմությունը հավերժացող ժողովուրդի,
Վառ հավատով փառքերը մեր ավանդեցին որդոց որդի.
Տեսան շքեղ մեր ապագան, անընկճելի ազատ ոգին,
Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացած Թուր-Կայծակին[2]:

03.VIII.1939թ.
Ծաղկաձոր

Ավետիք Իսահակյանն ասել է ժողովրդական էպոսի ամենակարևոր, ամենաէական առանձնահատկության մասին: Էպոսը ճչում է կյանքի մասին ու

---

[1] **Чхандогя-Упанишада.** Перевод с санскрита, предисловие и комментарии А. Я. Сыркина, М., 1965, с. 115-116,
[2] **Ավետիք Իսահակյան**, Երկերի ժողովածու, հատ. I, Երևան, 1950, էջ 297:

փառաբանում հորդաբուխ, ազատ, հավերժական այդ կյանքը: Դրանում է ժողովրդական կյանքի պաթոսը, կոչումը:

«Սասունցի Դավիթը» հերոսական էպոս է: Հերոսությունն այն բանի մեջ է, որ թույլ չտաս քեզ ստրկացնել, թույլ չտաս նվաստացնել, այն բանի մեջ, որ պաշտպանես սեփական ակութի կրակը՝ կյանքի հավերժ կանաչ ծառը:

Հերոսականի այսպիսի ըմբռնումը մարդասիրություն է ենթադրում:

Էպոսի կանայք

Էպոսն ստեղծող ժողովուրդն իր լավագույն իդեալները մարմնավորել է ոչ միայն Սասնա դյուցազունների միջոցով, այլև դրանց կրողներ է դարձրել կին հերոսներին: «Սասունցի Դավիթ» էպոսում մեծ թիվ են կազմում և մեծ դեր են կատարում կանայք: Նրանք համարյա միշտ սիրո մեջ նախաձեռնող են, իրենք են ընտրում իրենց համար ամուսիններ: Միջնադարյան կրոնական գրողների՝ կանանց նկատմամբ ունեցած ժխտողական վերաբերմունքը ոչ մի արտահայտություն չի գտել և չէր էլ կարող գտնել «Սասունցի Դավիթ» էպոսում, որը, պետք է ասել, իր էության բոլոր գծերով, սկզբից մինչև վերջ, իր մեջ արտահայտելով աշխատավոր ժողովրդի առողջ կենսահայեցողությունը, ուղղակի հակադրությունն է ֆեոդալական եկեղեցականության քարոզած հետադիմական սկզբունքների:

Հայրենիքի նկատմամբ պատասխանատվության զգացումն է մղում Դեղձուն Ծամին՝ հագնելու ամուսնու զենքն ու զրահը և պաշտպանելու Սասունը: Արմաղանը երդմնազանց է լինում, իր մահվան գնով Սասնա տանը ժառանգ է թողնում: Նույն նպատակով, բայց ոչ թե սիրո թելադրանքով, այլ սեփական երկրի շահի համար Իսմիլ Խաթունը նենգությամբ Մեծ Միերից ժառանգ է ունենում: Նույն այդ շահի թելադրանքով, երբ Դավիթը սպանում է Մելիքին, հարազատ որդու դիակի առաջ Իսմիլ Խաթունը առաջարկում է նրան տեր կանգնել Մելիքի կնոջն ու երկրին: Մեր ժողովուրդը միջնադարում անգամ լուսավոր հայացք է ունեցել կնոջ նկատմամբ՝ նրան վերապահելով ոչ միայն տղամարդուն հավասար իրավունքներ, այլև պարտականություններ: Էպոսում հայ կանայք համարձակ են, ինքնուրույն: Խանդութն ու Գոհարը մենամարտում են իրենց փեսացուների հետ նրանց ուժը ստուգելու համար:

Էպոսի տարբեր էջերում տեսնում ենք քրիստոնեական պաշտամունքի դրսևորումներ: Դրանց առաջին ապացույցներից մեկն այն է, որ Ծովինարը ձևական է ամուսնանում Բաղդադի խալիֆի հետ, որը մահմեդական էր (էպոսում՝ կռապաշտ), և քրիստոնեական կրոնը նման ամուսնություն չի թույլատրում: Ծովինարն իր հետ օտար երկիր է տանում նաև քահանա՝ շեշտելով ցմահ քրիստոնյա մնալու ձգտումը: Ավելին, Ծովինարի խնդրանքով քահանան Բաղդադում Սանասարին ու Բաղդասարին հայերեն գրել-կարդալ է սովորեցնում: Քրիստոնեական կրոնի ցայտուն դրսևորում է նաև Սասնա

դյուցազունների թևի վրայի եղած խաչը, որը, նայած հանգամանքների, գունափոխվում է:

«Սասունցի Դավիթ» էպոսի կին դյուցազուններից ամենագեղեցիկ և ամենաամբողջական բնավորության գծերով պատկերված է Խանդութ Խաթունը: Խանդութն ունի իր, իբրև մարդու, արժանապատվության բարձր գիտակցություն: Նա անկամ ենթակա չէ որևէ մեկին:

Խաղաղության ձգտումը

Մեր էպոսում լավագույնս է արտահայտվում հայրենասիրության, խաղաղության, ընտանիքը, ծնողին սիրելու և հարգելու գաղափարները: Էպոսում մենք չենք տեսնում նվաճողական որևէ ձգտում: Չորս ճյուղի հերոսներն էլ խաղաղասեր են, կառուցող, ազգասեր, հայրենասեր: Էպոսում կարևորվում է հայրենի հողի պաշտպանությունը: Այս գաղափարների կրողներն են էպոսի հերոսները և այս գաղափարներն են, որ մեր էպոսը դարձնում են լավագույնը:

«Սասունցի Դավիթ» էպոսի բովանդակության լավագույն կողմերից մեկն է այն, որ ստեղծագործ ժողովուրդը մի զարմանալի լայնախոհությամբ պատկերել է նաև հարևան Մսրա ժողովրդին, որի իշխողները իր մշտական հակառակորդներն են: Բնորոշ այն է, որ Մսրա ժողովուրդը երբեք համակրանք չի ցուցաբերում դեպի իր մեծերի զավթողական ձեռնարկումները: Ժողովուրդը անարդարացի պատերազմ չի ուզում. այդ տրամադրությունը հիանալի կերպով ընդհանրացված է Դավթի հետ խոսող ծերունի զորականի կերպարում:

Էպոսին մի առանձին ճշմարտացիություն ու կենսունակություն են հաղորդում ժողովրդական հումորն ու սատիրան: Կենսախինդ ու կենսասեր ժողովուրդը իր երկն օժտել է նաև իրեն բնորոշ առողջ հումորով ու սուր երգիծանքով: Առանց բառի ու լիաթոք ծիծաղի հնարավոր չէ կարդալ Սասնա ծռերի միամտությունը պատկերող հատվածները: Սիրելի հերոսների հանդեպ ունեցած խոր սիրո յուրահատուկ արտահայտություններից է երբեմն-երբեմն նրանց որոշ արարքները և վարմունքը բարի հումորով պատկերելը: Նման գեղեցիկ դրվագներով առավել հարուստ է Դավթի ճյուղը:

«Ա՛խ, երանի՝ ով մարդ կգա ու մարդ կերթա անարատ...» թումանյանական երազանքը էպոսում մեր ժողովուրդը մարմնավորել է Սասնա դյուցազուններից հատկապես Դավիթի կերպարում: Իր ազնվությամբ, անմեղությամբ, մանկական մաքուր պարզությամբ, արդարամտությամբ ու վեհանձնությամբ է բնութագրվում նա: Էպոսի գլխավոր հերոսը բարոյապես վերին աստիճանի բարձր ու մաքուր, պարզասիրտ անձնավորություն է, ուստի բնական է, երբ փոքր տարիքում միամտության ու առհասարակ որոշ կենսափորձի պակասության հետևանքով նա ծիծաղելի դրություններին մեջ է ընկնում: Այդպիսի մի դեպք է օրինակ, երբ Դավիթը

կռվում է պատուհանի ճեղքից մութ սենյակ ընկած արևի շողքի հետ, հովվություն ու նախրապանություն անելիս՝ ընտանի կենդանիները խառնում է վայրի գազաններին: Դավիթը ոչ միայն Սասնա ժողովրդի, այլև ընդհանրապես աշխատավոր մարդկության շահերի պաշտպանն է: Նա շատ լավ գիտի, որ ժողովուրդները ծարավի են խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի, որ նրանք միմյանց նկատմամբ թշնամանք չունեն, թշնամություն հրահրողները տիրողներն են: Այդ ճշմարտությունը նա նույնիսկ ճանաչում է պատերազմի ամենաթեժ պահին՝ արաբ ծերունու իմաստուն խոսքից հետո:

Մյուս կողմից, ժողովուրդը սատիրական երգիծանքի է ենթարկել բռնակալներին ու կեղեքիչներին՝ նրանց չարության, մեծամտության ու ամբարտավանության, պարծենկոտության տակ սքողված իրական թուլամորթության և շատ այլ արատների համար[3]:

Ժողովրդասիրության ու հայրենասիրության փայլուն օրինակ է տալիս Առյուծաձև Միհրը: Իմանալով, որ երդմնազանց լինելու դեպքում ինքն ու կինը պետք է մահանան, նա դիմում է այդ քայլին, որպեսզի իրենից հետո Սասունն անտեր ու անպաշտպան չմնա:

Աստված թող մեկ տըղա տա մեզ,
Էրթա Մելիքի օձիք բռնի,
Թող չը հանգչի Սասնա ճրագ,
Աստըծու զառ գել չի ուտի:
Որ մենք կանք մեր աշխըրքին-տի մեռնենք.
Համա որ մենք մեռնենք,
Մեր տղա մեր տեղ սաղ ըլի՝
Մենք էլ սաղ տի հիշվենք:
Մեր տան անուն չի կորսվի,-

այս խոր համոզմունքով է Միհրը դիմում անձնազոհության: Օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարը, սակայն, իր ամբողջական ու փայլուն արտահայտությունն է գտել էպոսի երրորդ ճյուղում՝ Սասունցի Դավթի կերպարի միջոցով: Մսրա Մելիքն ամեն ինչ անում է Սասնա ճրագը մարելու, Սասունը հափշտակելու համար: Բայց միշտ էլ նրա դեմ դուրս է գալիս ժողովրդի սիրելի զավակը՝ Դավիթը, խափանում օտար բռնակալի բոլոր դիտավորությունները: Ժողովուրդը աշխատավորի արդար զայրույթով ու սպանիչ ծաղրով է ներկայացնում բռնակալ Մելիքին ու նրա կամակատարներին, իսկ սիրելի

---

[3] Մ. Մկրյան, հատոր 1, Երևան, 1987թ.:

հերոսի սխրագործությունները պատկերելիս ազատություն է տալիս իր երևակայությանը, հիպերբոլիկ պատկերներով պանծացնում նրան: Մանուկ Դավիթը չի անցնում բռնակալի թրի տակով: Փորձում են զոռով տանել, բայց ճկույթը դիպչում է քարին, և քարից կրակ է ելնում: Դավիթը այնպես է կոտը խփում հարկահան Կոզբադնի գլխին, որ կոտի փշրանքները մինչև օրս էլ թռչում են: Եվ, վերջապես, Դավիթը մի զարկով կտրում է քառասուն ջրաղացքար, քառասուն գոմեշի կաշի, Մելիքին կիսում երկու հավասար մասի և այնպես կիսում, որ Մելիքը զարկի ուժգնությունից չի զգում իր կիսվելը: Ավելին: Եթե հրեշտակը իր թևը դեմ չառներ Դավթի թրին, ապա կպատռվեր նաև դժոխքի սև ջուրը, և երկիրը կկործանվեր: Նվաճողի ու բռնակալի նկատմամբ այսպիսի հետևողական վճռականություն կարող է ցուցաբերել միայն այն ժողովրդի երևակայությունը, որը հազարամյակներ շարունակ անհավասար մաքառումների մեջ է եղել սեփական գոյության իրավունքը հաստատելու համար:

«Սասնա ծռեր» վիպերգում արծարծված ոգին

«Սասնա ծռեր» վիպերգի ամենաբնորոշ գիծը հերոսական անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած արասպելական դյուցազունների հերոսական սխրանքներով և հայ ժողովրդի դարավոր ոսոխների, հատկապես 8-10-րդ դդ. արաբական բռնապետության դեմ մաքառումների հերոսական պատմությամբ: Դյուցազնական հաղթական ոգին դրվել է պատմական որոշակի հողի վրա, տիեզերական հակադիր ուժեր մարմնավորող բարի դյուցազունների և նրանց չար հակառակորդների դեմ անզիջում պայքարը պատմականորեն կոնկրետացել, դարձել է հայրենի երկրի հերոսների պայքար՝ ընդդեմ օտար բռնակալների, հայրենի հերոսների անխուսափելի հաղթանակով: Հին առասպելական-ավանդականը ձուլվել է նորին, պատմականին, վերամշակվելով թարմացել և ձեռք բերել կոնկրետ ազգային նկարագիր ու բովանդակություն, սակայն իսպառ չի վերացել: Որոշակի պատմաշրջանի հավաստի դրոշմ կրելով հանդերձ, «Սասնա ծռեր»-ն իր վիպական հնավանդ ու բարդ բաղադրությամբ, մանավանդ բանավոր ավանդվելու շնորհիվ, իր մեջ է ներառել և գեղարվեստորեն համաձուլել հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների նյութ. ու հոգևոր կյանքի տարբեր իրողություններ՝ ձեռք բերելով պատմամշակութային հուշակոթողի արժեք:

«Սասնա ծռեր» վիպերգը բանասացների միջոցով, տարբեր սերունդներ հայրենասիրական, մարդասիրական, խաղաղասիրական ոգով դաստիարակելով, տարբեր պատումներով անցել է սերնդեսերունդ և հասել մինչև մեր օրերը: Վիպերգը ներկա պահին էլ ունի մեծ դաստիարակչական նշանակություն, երիտասարդ սերունդը ծանոթանալով էպոսին, ճանաչում և բացահայտում է իր արմատները, կենդանի շփվում է անցյալի և նախնիների ոգու հետ:

Սասնա հերոսները կրում են հայ ժողովրդի բնավորության հիմնական գծերը: Վիպերգում տեսնում ենք նաև բուն ժողովրդին, նրա գրեթե բոլոր շերտերի ներկայացուցիչներին՝ հողագործներ, հովիվներ, շինարարներ, զինվորներ, քահանաներ, իմաստուն ծերունիներ, գեղջուկ կանայք և ուրիշներ: Ժողովուրդն էպոսում հանդես է գալիս իր անսասան ուժով, իմաստությամբ ու ստեղծարար աշխատանքով, կենսասիրությամբ ու լավատեսությամբ:

Ժողովրդի իմաստությունը մարմնավորում են Արտատեր Պառավը, Քեռի Թորոսը, Ձենով Հովանը և այլ տարեց մարդիկ, ովքեր կյանքի փորձով հարստացած՝ իրենց խրատներով ու խորհուրդներով օգնում են Սասնա քաջերին, կանխում նրանց սխալները, ճիշտ ուղղություն տալիս նրանց գործողություններին:

Էպոսի գլխավոր նպատակներից մեկն էլ մարդասիրության դաստիարակումն: Բոլոր Սասնա քաջերը, հմուտ որսորդներ ու անվեհեր մարտիկներ լինելուց բացի, կարուցող-շինարարներ են: Սանասարն ու Բաղդասարը կառուցում են Սասունը, իսկ Մեծ Միհրը՝ Մարութա բարձր Աստվածածնի վանքը: Այս շինությունները նրանք կառուցում են ժողորդի համար: Բնորոշ է,որ Սանասարն ու Բաղդասարը որոշում են նախ կառուցել աղքատ մարդկանց տները, հետո միայն՝ իրենց բերդը: Իսկ Միհրը Մարութա վանքը դարձնում է ոչ միայն աղոթատեղի, այլև՝ տկար ու պանդուխտ մարդկանց ապաստարան:

Ժողովրդի ազատության ու բարօրության համար է, որ Սասնա քաջերը սուր են վերցնում և անձնազոհաբար կռվում ավազակների, հարկահանների ու թշնամու զորեղ բանակների դեմ:

Սասնա հերոսները նաև վեհանձն են, շիտակ, իրենց տված խոսքին հավատարիմ: Նրանց խորթ են նենգությունն ու խորամանկությունը, քաջերին բնորոշ է նաև անձնազոհությունը: Նրանք պատրաստ են մեռնել իրենց հողի, ծնողի և ժողովրդի համար:

Սասնա հերոսները որքան էլ ատում են բռնությունն ու ստրկությունը, որքան էլ ցասումով կռվում են թշնամիների դեմ, բայց ամենևին դաժան ու անհոգի չեն: Նրանք օժտված են զգայուն սրտով, ջերմ ու խոր զգացմունքներով:

Սասնա դյուցազունների չորս սերունդներն էլ բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ, նվաճողների և բռնակալների նկատմամբ հետևողական վճռականությամբ մղած պայքարով: Հազարամյակներ շարունակ անհավասար մաքառումների մեջ սեփական գոյության իրավունքը հաստատելու համար մղած պայքարն են ներկայացնում նրանք՝ պահպանելով մեր ազգային արժեքները, որոնք ժամանակի ընթացքում փոխում են իրենց ձևը, բայց բովանդակությունը նույնն է մնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դեպքերի և անձնավորությունների հիպերբոլիկ ու առասպելական բնույթի նկարագրություններն արտահայտում են ժողովրդի ուժի և հզորության գաղափարը: Առհասարակ էպոսում մեծ տեղ է գրավում առասպելականությունը, որը, սակայն, Խորենացու ոճով ասած՝ այլաբանաբար ճշմարտություն է թաքցնում իր մեջ:

Էպոսի ամեն մի ասացող ունի իր արվեստը. նրանք ամենքն էլ իմացել են նաև շատ ուրիշ ժողովրդական ստեղծագործություններ և հայտնի են եղել որպես շնորհալի պատմողներ: Դարեր շարունակ պահպանվել է «Սասունցի Դավիթ» էպոսը հայ ժողովրդի մեջ և օգնել է նրան իր թշնամիների ու կեղեքիչների դեմ մղած պայքարում:

«Սասունցի Դավիթ» էպոսը անմահ է. այն ներկայումս էլ դաստիարակում է հայրենասիրական ու հերոսական ոգով և պատճառում գեղագիտական մեծ հաճույք:

Էպոսի համաշխարհային պատմության մեջ «Սասունցի Դավիթը» այն բացառիկ նմուշներից է, որ մարդկությանը հասել է գրի առնվելով անմիջապես ժողովրդական ասացողների բերանից: Էպոսը ժողովրդական է ոչ միայն այն պատճառով, որ ապրում է ժողովրդական զանգվածներում և պատմվում նրանց բերանով, ոչ միայն այն պատճառով, որ մինչև վերջին ժամանակներս, մինչև մեր օրերը ապրում է բանավոր պատմվելով... այլև ամենից առաջ այն պատճառով, որ հերոսների ողջ աշխարհայացքը անխզելիորեն կապված է ժողովրդական ներքնաշխարհի հետ, այն պատճառով, որ բոլոր հերոսները անխզելիորեն կապված են ժողովրդի հետ»[4]:

«Սասնա ծռեր» վիպերգն ունեցել է նաև բազմաթիվ գրական մշակումներ, որոնցից ամենահաջողվածը Հովհ. Թումանյանի համանուն պոեմն է: Հիշենք նաև մեծ քանդակագործ Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ» հոյակերտ արձանը, որը դարձել է իր ազատության ու անկախության համար հերոսաբար մաքառող հայ ժողովրդի ամենափայլուն խորհրդանիշը:

Իր գաղափարներով ու գեղեցիկ հորինվածքով «Սասնա ծռերը» աշխարհի լավագույն վիպերգերից է, եթե ոչ լավագույնը:

Էպոսի ուսումնասիրումը բացառիկ նշանակություն ունի սովորողներին հոգևոր և բարոյական, ազգային և համամարդկային արժեքներով դաստիարակելու գործում:

---

[4] «Սասունցի Դավիթ», հայկական ժողովրդական էպոս, երկրորդ հրատարակություն, Երևան, 1961, Հ. Օրբելի, «Հայկական հերոսական էպոսը», նախաբան:

Դպրոցը պետք է օգտագործի իր դաստիարակչական ներուժը՝ սովորողների մեջ սերմանելով բարություն, ազնվություն, ճշմարտասիրություն, հարգանք մարդու նկատմամբ և այլն:

Մեր իրականության մաս կազմող արժեքները՝ հոգևոր և նյութական, ամուր հենարաններ են, որոնք սովորողին, որ վաղվա քաղաքացին է, օգնելու են պայքարելու կյանքի հարուցած խոչընդոտների դեմ, դիմակայելու ստեղծված փորձություններին, հաղթահարելու անելանելի թվացող դժվարությունները:

Ցանկալի արդյունքի հասնելու համար ստեղծագործությունների ուսումնասիրումը պետք է իրականացվի ճիշտ ու նպատակային ընտրված մեթոդների միջոցով:

Երեխաների հետ աշխատելիս ուսուցչի գերխնդիրն է յուրաքանչյուրին սովորեցնել ճանաչել ու սիրել հայրենիքը՝ ուժերի հնարավորության չափով նպաստ բերելով նրա բարգավաճմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

«Սասունցի Դավիթ», «Արևիկ», հրատարակչություն, 1988

Մ. Մկրյան, հատոր 1, Երևան, 1987թ.

Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. I, Երևան, 1950

« Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան 2002

http://www.armenianreligion.am/

«Սաս ո ւ ն ց ի Դավ ի թ . Հ այ ժ ո ղ ո վ ր դ ակ ան հ ե ր ո ս ավ ե պ», Եր և ան , 1981 թ.,: